

ԻՏԱԼԿԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Ինչ առիթով են գրվել իտալացի նշանավոր քաղաքական գործիչներ Ռիչչիոթի Գարիբալդիի և Ամիլկարե Չիպրիանիի նամակները՝ ուղղված հայ ժողովրդին:

1894—1896 թթ. Արգուլ Համիդ սուլթանի՝ Արևմտյան Հայաստանում կազմակերպած ջարդերին զոհ զնացին 300.000 հայեր:

Իտալական կառավարությունը դարավերջին բարենպաստ դիրք էր բռնել հայկական հարցում: Իտալիայի հասարակական կարծիքը նույնպես նպաստավոր էր: Դա բացատրվում էր իտալացիների՝ 1859—1860 թթ. շարժման հետևանքով օտարի լծից ազատագրվելով և իրենց պետականության ստեղծմամբ: Այդ ազնիվ առաքելությանը նպաստել էին իտալական պայքարի առաջնորդները (Ջուզեպպե Գարիբալդի, Ջուզեպպե Մաձձիի, Կամիլիո Կավուր և ուրիշներ): Այս առումով 19-րդ դարում որոշակի նմանություններ և ընդհանրություններ կային իտալացիների և հայերի պատմական ճակատագրերի միջև: Այդ են հաստատում ինչպես իտալացի, այնպես էլ հայ ճեղհիակները:

«Եվրոպայի հայ ուսանողական միությունը» հայ դատի պաշտպանության համար ժնեից նամակով դիմել է նշանավոր գաղթարդիականներ Ռիչչիոթի Գարիբալդիին (1847—1924), որը Իտալիայի ազգային հերոս Ջուզեպպե Գարիբալդիի կրտսեր որդին էր, իտալական խորհրդարանի անդամ և բանակի գեներալ ու իտալական խորհրդարանի անդամ, աչքի ընկնող զորավար Ամիլկարե Չիպրիանիին (1844—1918): Վերջիններս 1899 թ. Հոսմից և Փարիզից չերմ ու անկեղծ պատասխան նամակներ են հղել հայ ժողովրդին, որտեղ իրենց վերաբերմունքն են գրսևորել հայերի նկատմամբ:

Ռիչչիոթի Գարիբալդիին հայտնում էր, որ բացարձակապես անօգուտ է սխաղաղութան խորհրդածողովին դիմելը: Հայերը, ինչպես և մյուս ազգերը, եթե ուզում են ազատագրվել, պետք է պայքարեն զենքով: Նրա համոզմամբ, միայն ապստամբության ուղիով հայերը կարող են վերջնականապես ազատագրվել թուրքական բռնապետական լծից և իրենց վրա հրավիրել եվրոպական դիվանագիտության ուշադրությունը: Եթե գործը հասնի ապստամբության (1897 թ. Ռիչչիոթի Գարիբալդիին և Ամիլկարե Չիպրիանիին իրենց կամավորական ջոկատներով կոչում էին թուրքական լծից կրետե կղզու ազատագրման համար), ապա այդ դեպքում կստանան իր օգնությունը:

Գրեթե նույն բովանդակությունն ունի Ամիլկարե Չիպրիանիի նամակը: Նա իր կարծիքները հայտնում հայկական դատի արդար լուծման վերաբերյալ և Ռիչչիոթի Գարիբալդիի նման հակված էր կարծելու, որ խորհրդածողովներն այս հարցը չեն կարող լուծել, քանի որ եվրոպական վեց տերությունները թուրքիայից ունեն իրենց սպասելիքները: Ամիլկարե Չիպրիանիին գատապարտում էր եվրոպական մեծ տերություններին այն բանի համար, որ նրանք 1894—1896 թթ. հայկական ջարդերի օրերին շուրջից խառնվել թուրքիայի ներքին գործերին, ընդհակառակը, աշխատեցին հովանավորել «եղեռնագործ» Արգուլ Համիդին և անսասան պահել սուլթանի գահը: Նա գտնում էր, որ սուլթանի ձեռքերն արյունի մեջ են թաթախված: Ուրեմն, մնում է մի հանգամանք. «Ազատությունը կուելով և զայն արիւնով լողցնելով ձեռք կը ձրգուխ»: Եվ նա հայերին հայտնում էր օգնության անհրաժեշտության դեպքում իր աջակցությունը:

Դրան հաջորդել է «հին մեծանուն գաղթարդիական ազգիկի»՝ Ամիլկարե Չիպրիանիի մեկ ուրիշ (թվով 2-րդ) նամակը՝ «Հայերը» վերնագրով, որը նույնպես ուղղված էր «Եվրոպայի հայ ուսանողական միությանը»: Իտալացի նշանավոր հասարակական գործիչը կոչ էր անում ո՛չ թե ազմուկ-աղաթակ հանել, այլ գործել, գտնելով, որ ուրիշների քաջալերական խոսքերը չեն կարող խրախուսել հայերին: Ամիլկարե Չիպրիանիին գործի մարդ էր: Նրա կարծիքով, հայերը չպետք է հուզվեն և զգացմունքներով առաջնորդվեն, քանի որ երազատութիւնը չեն մուրար, այլ կ'առնեն, ուրիշներէն չեն խնդրեր, այլ կուելով ձեռք կը բերեն»: Իթե ժողովուրդը ազատ է ուզում լինել, արցունքներ չպետք է թափի, այլ պետք է կազմակերպվի, պետք է պայքարով կռի իր ազատությունը: Նա քննադատում է եվրոպական դիվանագիտությանը, որին հավատ չպետք է ընծայել. այն նույնքան վտանգավոր է, որքան ոճրագործ Արգուլ Համիդը: Նրա կարծիքով, հայերի հույսը և հավատը պետք է լինի քաջությունը, հանդըգ-

նությունը, ատելությունը: Ենտեցեք լեռները,— գրում էր նա,— և Արդիւ Համրդի աւազակ-ներուն դէմ՝ առաջակային որսովքեան և աւերածութեան անխնայ պատերազմը մղեցէք. ըրէք անոնց, ինչպէս որ անոնք Ձեզի ըրինք:

Երկու ուղի կա այդ մզձավանջային վիճակից գուրս գալու համար՝ կամ մեռնել հերոսաբար՝ զենքը ձեռքին կռվելով, կամ էլ՝ «լաշկան» ձեռքով: Եթէ ընտրվի առաջին ուղին, ապա կազատվեն, մինչդեռ երկրորդով ընթանալով ռազատութեան հո՛տը անգամ չէք առներ:

Ինչչիտթի Գարիբալդին և Ամիլիարե Զիթրիանին, իրենց աջակցությունն առաջարկելով արևմտահայութեանը, իրականում չէին պատկերացնում հայ ժողովրդի ծանր վիճակը, ապա-տամբելու հնարավորութիւններ շունհնալու և մյուս հանգամանքները: Այդ պատճառով նրանց առաջարկները չվերածվեցին գործնական քայլերի:

Իտալացի հերոսների նամակները լափազանց հետաքրքիր են իտալա-հայկական ազատագրական շարժման պատմութեան ուսումնասիրման համար: Դրանք առաջին անգամ տպագրվել են «Դրօշակում» 1899 (№ 3) և 1901 (№ 9) թվականների համարներում:

Հ. Ա. ԱՍՄԱՐՅԱՆ

Ա

Յարգելի պ. տնօրէն Դրօշակի

Բացարձակապէս անօգուտ կը կարծեմ խաղաղութեան խորհրդատողովին դիմելը:

Այն իրողութիւնը՝ որ այդ ժողովը ռուս ինքնակալին նախաձեռնութիւնով կը կատարուի՝ որ խաղաղութիւն քարոզած պահուն իսկ, կը քանդէ իր ընդարձակ կայսրութեան մէջ գոյութիւն ունեցող քչիկ մը ազատութիւնն ալ— Ծինչանդան ըսել կ'ուզեմ— ստոյգ ապացոյց մըն է թէ իր առաջարկութեան ներքե ծուղակ մը թաքնած է ի վնաս ժողովուրդներու արդարութեան, ազատութեան և անկախութեան:

Հայերը, ինչպէս և միւս ժողովուրդները՝ որոնք այսօր Թուրքիոյ բռնութեան լուծը կը կրեն, եթէ ազատ ըլլալ կ'ուզեն, պէտք է այդ արդարութեան և մարդկայնութեան գործը պահանջեն զէնքը ձեռքընին:

Այս կերպով միայն կարելի է զօրը դնել եւրօպական դիւանագիտութիւնը, որպէսզի լսէ թշուառ ժողովուրդներու ձայնին:

Այսպէս ըլլալով՝ ես և իմ բարեկամներս մենք մեզ տրամադրութեան տակ կը դնենք դժբախտ հայ ժողովրդին, որուն հետ է մեր բոլոր համակրու-թիւնը:

Հաւատացէք միշտ անկեղծ բարեկամութեանս:

27 մարտ (18)99

Հոսմ.

ԻԻԶԶԻՕԹԻ ԳԱՐԻԲԱՂԻԻ.

Բ

Սիրելի՛ քաղաքացիներ,

Կը փութամ շտապով պատասխանել Ձեր 24 մարտ նամակին, նախ՝ շնորհակալութիւն յայտնելու որ զիս յիշեր էք, յետոյ անկեղծօրէն ըսելու համար իմ մտածումս հայկական խնդրի մասին:

Հայկական հարցը, եթէ մեզի և բոլոր սրտի տէր մարդոց համար վերին աստիճանի մարդասիրական հարց մըն է, եթէ երկար ու սրտայոյզ վկայաբանութիւն մըն է ան, արժանի ո՛չ միայն շահեկանութեան, այլև սիրոյ և խորին գթութեան. այդպէս չէ պաղ և վայրագ քաղաքականներուն համար, որոնք կը կառավարեն այսօր Օւրօպան:

(18)94—96-ի զարհուրելի, անլուր, խուժ, տմարդի և եղեռնային կոտոր-

բաժնեբրը, որոնք յուզեցին արար աշխարհ սառն ու անտարբեր ձգեցին զանոնք:

Ձեր տազնապալից ճիշերուն, խողխողածնեբրուն հոնդիւննեբրուն, հալածւածնեբրուն ու բանտարկւածնեբրուն լաց ու կոծանքին վրայ, դահլիճնեբրը նըշանակութենէ զուրկ ծանուցագրեբ խրկեցին, նախապէս գիտնալով որ մարդասպան Արդիւ Համիդ կարևորութիւն անգամ պիտի շտար:

Ձեր արիւնը անոնց երեսը ցայտեց, Ձեր քաղաքնեբրը, տունեբրը կրակի տրեցան, անոնք տեղեբունէն շերերացին. ձգեցին Ձեզ, աչքերնուն առչկ, որ փողոտեն, որովհետև ամէնքն ալ Թիւրքիան բաժնելու շար ցանկութիւնը ունէին, բայց ամէն մէկը կը մտածէր առիծի բաժինն ստանալ: Կարելի չէր աս, ու ժողովրդի մը նահատակութիւնը կ'անհետանար յուսավրէպ աչքծակութեան մը առչկ:

Մնաց որ՝ իրենք զիրենք մեծ կոշող վեց տէրութիւննեբրը՝ կը ծիծաղին տկարնեբրուն վրայ: Յունա-թրքական պատերազմին մէջ փոքրիկ Յունաստանի դէմ Թիւրք ժանդարմնեբրու իայտառակ դեբը խաղացին անոնք:

Այո՛, Եւրոպան Ձեր սպանչին մեղակիցը և քիւրդեբրուն հետ համերաշխ եղաւ: Ան (Եւրոպան) նախադասեց Ձեր արիւնին մէջ թաթաւ ձեռքեր ունենալ, քան ձեռք դպցնել զահու մը, նոյնիսկ երբ այդ զահուն վրայ կը բազմէր գոհեցիկ շարագործ մը, աւազակ մը, եղեռնագործ մը:

Այս տխուր փորձերէն ետքը ալ քաղաքակիրթ ըսած Եւրոպայէն յուսալիք բան չունիք:

Ողբերգակաս ըտպէի մը մէջ ան երեսի վրայ ձգեց Ձեզ, երբ թրքական եաթաղանը Ձեզմէն հազարաւորնեբր կը մանզդէր, թէ և Եւրոպայի ժողովուրդնեբրը Ձեզի հետ էին:

Իրա՛ւ է, զէնընկէցութեան առաջարկ մը կայ, որ նախ ընդունելի պիտի չըլլայ, յետոյ ետէ ընդունի ալ, վաղը Ձեզ աւելի լաւ կերպով գնդահար ընելու համար է, որովհետև Չինաստանի և Ափրիկէի բաժանումը խողազ ճամբով չպիտի կատարի: Եւ այս խորհրդածողովին մէջ՝ որ բաղկացած է արիւնի ու գոլջափշտակութեան ծարաւի մարգերէ, Ձեր արդարութեան ճիշը պիտի չհասնի. մարդ պիտի չհամարձակի բերան բանալ անոր մասին. ոչ ոք ձայն պիտի հանէ:

Եւրոպայէն որևէ բան մը յուսալու չէք ուրեմն: Ան Ձեզի դէմ է. փորձով ցոյց տաւ սրդեն Ձեզի և առջին առիթը ներկայացածին նորէն պիտի տայ փորձը:

Ձեմ համարձակիր ըսել թէ ժողովուրդնեբրը պէտք չէ յուսան, թէ յոյսերնին իրենք իրենց վրայ դնելու են միայն:

Եւրոպական կառավարութիւննեբրը եթէ երբեք Ձեր պաշտպանութիւնը ձեռք առնէին— անկարելի բան— ազատութեան միջոցով ստրկութիւն պիտի բերէին Ձեզ:

Ազատութիւնը կուելով և զայն արիւնով լողցնելով ձեռք կը ձգի:

Հարստահարած ժողովուրդնեբրը մէկ իրաւունք միայն ունին, անվիճելի իրաւունք— ապստամբութիւնը:

Եթէ Դուք խելամտորէն զայն պատրաստելու միջոցնեբրը ունիք, վստահ չեղիք իմ վրայ, իմ աջակցութեանս վրայ:

Պարիզ, 4 ապրիլ (18)99

Սրտանց Ձերդ
ԱՄԻԿԱՐ ԶԻՊՐԻԱՆԻ

¹ Վեց տերութիւննեբր էին՝ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսաստանը, Ավստրո-Հունգարիան և Իտալիան:

ՀԱՅՅԻՐԸ

Իբրև պատասխան «Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան» ղիմումի՝ Ա. Չիպրիանի հետեւեալ յօդածը հրատարակած է «Լա պոիստ Ռէփրօրիկի» մէջ:

Հայեր,

Ձեզի համար աղաղակելու բոպէն չէ, այլ գործելու:

Ուրիշներու քաջալերական խօսքերը չեն, որոնք Ձեզ կուի պիտի խրախուսեն Ձեր գազան հարստահարիչներու դէմ:

Ձեր վիշտերը, Ձեր տառապանքները, Ձեր երկար մարտիրոսաբանութիւնը հերիք են:

Ժողովուրդ մը որ չի յուզիր իր սրախողխող եղբայրներու լացուկոծին, որ չ'ընդվզիր ամէն օր, իր սպաննիչներուն դէմ, որ չ'գիտեր ոչ պաշտպանել, ոչ իր սպանած հայրերուն, մայրերուն, կիներուն ու տղաքներուն վրէժը լուծել, որ ուրիշներու օգնութեան և միջամտութեան վրայ յոյս կը դնէ, որ չունի ինքնավստահութիւն իր սրտտուտութիւն իր դատին մէջ և որոնցմէ ոմանք— միլիօնատէրերը— աւելի սէր և զգայուն սիրտ ունին իրենց փողին համար, քան իրենց սևօր եղբայրներու կեանքին. ժողովուրդ մը, կ'ըսեմ, երբէք ազատ չպիտի ըլլայ, զի ազատութիւնը չեն մուրար, այլ կ'առնեն, ուրիշներէն չեն խնդրեր, այլ կուեկով ձեռք կը բերեն:

Լացարցունքները չեն, որոնք ազատութեան ծառը ծաղկեցուցին, այլ արիւնը:

Ազատ ըլլալ ուզող ժողովուրդ մը թող կազմակերպուի. դաւադրէ, շարժի, պայքարի. ստրկութենէ խտրժող մարդն է որ կ'աղերսէ, կուլայ, կ'աղաչէ:

Սկզբունքի մը, գաղափարի մը համար մեռնող մէկ մարդու հոնդիւնը շատ աւելի հզօրագոյնցիկ է, քան դարու մը մէջ ամբողջ ժողովրդի մը ողբուկոծը:

Կը հիանան խիզախներուն վրայ, կ'արհամարհեն վատերը: Վերջիններուն համար մոռացութիւն, առաջիններուն համար փառք:

Ճնշումի դէմ ապստամբութիւնը իրաւունք մըն է:

Ձեր թշնամիներէն սպասեցէք միայն ստրկութիւն, թշտութիւն, թուքումուր, տանջանք և աւերաւերում:

Լիովին բնաջնջումի դատապարտած ժողովուրդ մը իր յուսահատ դյուցազնութեան մէջ պետք է դնէ միայն յոյսը:

Մի՛ սպասէք, ուրեմն, որ այս կեղտոտ ոճիրը, որ սկսած է արդէն, աղջամուղջին մէջ կատարուի:

Եթէ դուք մեծ պատերազմի մը, մեծ յեղափոխութեան մը մէջ զոհէիք Ձեր 300.000 խողխողած եղբայրները, Դուք ազատ կ'ըլլայիք:

Ժողովուրդ մը անպատիժ չեն սպաններ, բացի այն պարագային, երբ այդ ժողովուրդը ինքը կ'երկնցնէ վիզը դահիճին:

Եթէ գիտէ, կուզէ ինքզինքը պաշտպանել, նոյնիսկ իր եղունգներով ու ակոսներով, չի յաղթիր ան, չի նւաճիր, չի ջնջւիր, չի կորսւիր:

Եւրօպական միջամտութեան վրայ յոյս դնել յիմարութիւն է: Անոնք ալ այնքան ոճրագործ են, որքան էտէպսիզ* Աբդուլ Համիդը, զոր ձգեցին և պիտի ձգեն որ արիւնի մէջ տապալուի ան: Անոնցմէ մէկը, Ֆրանսան, ոտնակոխ ընելով իր բոլոր անցած փառքը, սպառազինեց նաւատորմիդ մը, ոչ թէ ճընշուած ժողովուրդ մը փրկազատելու, այլ փողի անարգ խնդրի մը համար:

* Գրչութեան, լուսավորութեան հեռու, անկիրթ:

Այս Ձեզի կ'ապացուցանէ որ այսօր զգացումը փողքսակին մէջ է, չէ թէ սըրտին մէջ:

Բոլոր կառավարութիւնները այդ ջրէն են:

Եթէ Դուք շարունակէք դողսիրտ ըլլալ, հպատակիլ, յուսալ և Աստուծոյ աղօթել՝ կորսած էք:

Ձեր Աստածը, Ձեր յոյսը, Ձեր հաւատքը պէտք է ըլլայ Ձեր քաջութիւնը, Ձեր յանդգնութիւնը, Ձեր ատելութիւնը, Ձեր յուսահատութիւնը: Տեսէք պրզտիկ Կրետէն, որուն համար ես երկու հեղ կուեցայ: Ապստամբեցաւ ան, նեղ օրեր քաշեց, կուեցաւ և ազատեցաւ թրքական լուծէն:

Անոնց պէս ըրէք, Դուք այն ատեն պիտի շահագրգռէք ժողովուրդները Ձեր դատով:

Որովհետև Ձեր մարդասպան թշնամիները ոչ սեռի կը խնայեն, ոչ տարիքի, հետևաբար Դուք Ձեր պաշտպանութեան համար աղջիկ, տղայ ոտք ելլելու կուեցուցէք. յաղթել կամ մեռնիլ քաջերու պէս Ձեր պատին, Ձեր ապահովութեան, Ձեր ազատութեան և Ձեր անկախութեան համար: Զինուած յարձակումին պատասխանեցէք զինուած ապստամբութիւնով: Ուժին ուժով դէմ դրէք:

Թիւրքը կը հալածէ հայը, թող հայն ալ թիւրքը հալածէ:

Թիւր չէ որ հաշի կանուի, այլ քաջութիւնը և յանդգնութիւնը:

Տեսէք քաջասիրտ պօէրները: Ոչինչ այնքան հիանալիօրէն մեծ, աւելի վսեմ, աւելի փառապանծ, քան փոքրիկ Թրանսվալի հսկայական կոհիւր հր-զօր Անգրիոյ դէմ: Այս մեծ օրինակը ժողովուրդներու յիշողութեան մէջ անջինջ պիտի մնայ: Պօէրները արժանի են ազատ և երջանիկ ըլլալու, ըլլան թերևս: Հոգ չէ, յաղթեն կամ յալթին՝ անմահ պիտի մնան: Անոնք Ձեզի կը սորվեցնեն թէ ինչպէս ճշուած ժողովուրդ մը կուեցուցէ իրեն համար, իր երկրին համար, իր ազատութեան համար:

Հայեր, թօթեցէք Ձեր մեղապարտ անգործութիւնը: Հեռուները տեղափոխեցէք անկարները, բոլոր անոնք, որոնք կ'անդամալուծեն Ձեր խոյանքը, կը կապեն Ձեր գործունէութեան թևերը և կը կասեցնեն Ձեր վրէժխնդիր բազուկները: Նետուեցէք լեռները, և Արդիւ Համիդի աւազակներուն դէմ՝ աւազակային սրածութեան և աւերածութեան անխնայ պատերազմը մղեցէք. ըրէք անոնց, ինչպէս որ անոնք Ձեզի ըրին:

Ամէն միջոց լաւ և բարի է մարդոց՝ իրենց դահիճներուն դէմ կուելու, զայն խորտակելու և սատկեցնելու համար: Ամէն պատերազմ, որ կը տանի ազատութեան, արդար է և օրինաւոր:

Կամ մեռնիլ հերոսի պէս զէնքը ափին, կուելով, կամ մեռնիլ անարի և վատասիրտ, համակերպ ու լալկան:

Առաջին պարագային Դուք ազատ ըլլալու բախտէն զուրկ չէք. երկրորդ պարագային ազատութեան հո'տը անգամ չէք առնել:

Ընտրեցէ՛ք:

ԱՄԻԿԱՐ ԶԻՊՐԻԱՆԻ

АСМАРЯН Г. А.—Письма национальных героев Италии армянскому народу.—Во второй половине XIX века историческая судьба армянского народа и раздробленность страны в какой-то мере были похожи на раздробленность Италии и судьбу итальянского народа. Это замечали итальянские и армянские деятели того времени. Итальянские национальные герои Риччиотти Гарибальди (сын Джузеппе Гарибальди) и Амилкаре Чиприани писали вдохновенные письма армянскому народу, побуждая его освободиться от турецкого ига, советовали восстать и обещали свою помощь в этом деле.

Эти письма очень интересны для изучения итаलो-армянского национально-освободительного движений.